

**ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և
հանրային հարցերի մշտական հանձնաժողովի
Նախագահ Նաիրա Չոհրաբյանին**

Հարգելի տիկին Չոհրաբյան

Ինչպես Ձեզ հայտնի է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Սույն նախագիծը ՀՀ ազգային ժողովում քննարկելիս, ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ և հիմնական զեկուցող է նշանակվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանը:

Չանգվածային լրատվության միջոցներից մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի «Իմ քայլը» խմբակցության պատգամավորները հրավիրել են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին քննարկելու վերը նշված նախագիծը: Հիմնական փոփոխությունները վերաբերել են ՀԿ-ների ծրագրային հաշվետվությունների հրապարակայնությանը: Նշյալ քննարկումը տեղի է ունեցել 2020թ. փետրվարի 27-ին ժամը 10:00-ին Ազգային ժողովում, համակարգող պատգամավոր Մարիա Կարապետյան: Սակայն մեր կազմակերպությունն այդ քննարկման մասին նախապես չի տեղեկացվել և չի մասնակցել, չնայած նրան, որ եղել ենք ՊԵԿ-ի կողմից ստեղծված աշխատանքային խմբի անդամ և ակտիվ մասնակցություն ցուցաբերել:

Ինչևէ, նպատակահարմար ենք գտնում մեր կարծիքը գրավոր ներկայացնել Ձեզ (կից ներկայացվում է): Եվ լիահույս ենք, որ դուք մեր մտահոգությունները կբարձրաձայնեք և՛ հանձնաժողովում, և՛ Ազգային ժողովի բարձր ամբիոնից հարցեր կուղղեք նախագիծը զեկուցողին:

Հարգանքով՝

Լևոն Ներսիսյան

Գործադիր տնօրեն

Դիտողություններ և առաջարկություններ

(«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ)

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 14/02/2019թ. հ. 93-Ա հրամանով «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Սախարովի կենտրոն) ներկայացուցիչն ընդգրկված է եղել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքային խմբում: Սախարովի կենտրոնն իր բոլոր դիտողություններն ու առաջարկությունները սույն օրենքի նախագծի վերաբերյալ բազմիցս ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին, Արդարադատության նախարարությանը, Կառավարությանն ու Ազգային ժողովին: Ավաղ, դրանց մեծ մասը չեն ընդունվել:

Այսօր ՀՀ իշխանությունների համար «խնդիրը» «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ գործող օրենքի 24-րդ հոդվածի բովանդակության մեջ է, ըստ որի **հասարակական կազմակերպությունները** (այսուհետ՝ ՀԿ), **որոնց գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված) միջոցները, ֆինանսական հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն ունեն:** Նախագծով առաջարկվում է, որ այդ պարտավորեցնող նորմը տարածվի բոլոր ՀԿ-ների նկատմամբ, անկախ նրանից թե ինչ միջոցներից են նրանք օգտվում:

Մտահոգություններ և դիտողություններ

Դեռևս 2016թ. դեկտեմբերին ընդունվեցին ՀԿ-ների գործունեությունը կարգավորող «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի փոփոխությունները, իսկ դրա կարգավորող իրավական ակտերն ուժի մեջ մտան 2017թ. փետրվարին: Որոնց ընդունմամբ էլ պայմանավորված ՀԿ-ների գործունեության նկատմամբ վերահսկողության ամբողջ գործառույթը ՀՀ արդարադատության նախարարությունից փոխանցվեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ ՊԵԿ): ՀՀ արդարադատության նախարարությանը վերապահվեց միայն պետական գրանցում իրականացնելու գործառույթը: Մինչ այս փոփոխությունը օրենքով ՀՀ արդարադատության նախարարությունը զբաղվում էր ՀԿ-ների գործունեության և նրանց կանոնադրական նպատակների ու ինդիկատորների իրավական համապատասխանությամբ, իսկ ՊԵԿ-ը պատասխանատու էր միայն հարկային հարցերի համար: Այս փոփոխությունը տեղի ունեցավ առանց ՀԿ-ների համաձայնության ու գիտության:

Սույն նախագծով ՊԵԿ-ը փորձում է բացարձակ վերահսկողություն սահմանել բոլոր ՀԿ-ների նկատմամբ և «հարկ եղած դեպքում» ուղղակի ու անուղղակի միջամտել նրանց գործունեությանը: Իհարկե, ՊԵԿ-ը, ըստ էության վերաշարադրելով նախորդ իշխանությունների կողմից դեռևս 2009թ. մշակված նախագծի բովանդակությունը՝ ֆինանսական հաշվետվությունների պարտադիր ներկայացման մասով, մտադրություն ունի վարել նախորդի մերժված քաղաքականությունը: Ի դեպ, նախորդին չհաջողվեց կյանքի կոչել այդ նախագիծը, քանի որ այն տապալվեց 200-ից ավել ՀԿ-ների ներկայացուցիչներիս արդարացի բողոքների հիման վրա:

Այս նախագիծը, դառնալով գործող օրենք, լինելու է ակտիվ գործունեություն ծավալող և քաղաքական կամ այլ հայացքներ ունեցող որոշ ՀԿ-ների պետական ճնշման գործիքը, որով հարկ եղած դեպքում սահմանափակվելու են նրանց անկախությունն ու վտանգվելու է նրանց ինքնակառավարման սկզբունքի իրականացումը, ստեղծվելու է պետության կողմից նրանց գործունեությանն ուղղակի միջամտելու կամ խոչընդոտելու հնարավորություն:

Հետևաբար, առաջարկվող լրացման և փոփոխությունների զգալի մասը գնահատում ենք որպես էական սպառնալիք Հայաստանի քաղաքացիական հասարակության կառույցների կայացման և զարգացման գործընթացում: Առաջարկվող փոփոխությունները չեն համապատասխանում ոչ կառավարական կազմակերպությունների իրավական կարգավիճակի կանոնակարգման ոլորում առկա միջազգային փաստաթղթերի ոգուն, մասնավորապես՝ ***Եվրոպայի նախարարների կոմիտեի անդամ երկրներին ուղղված Rec(2007) 14 հանձնարարականի դրույթներին***¹:

Մեր այս մտահոգությունների մասին բազմիցս բարձրաձայնել ենք նաև վերը նշված աշխատանքային խմբի քննարկումների ժամանակ, ավաղ, ձայների մեծամասնությամբ, սույն նախագիծն ընդունվել է այս բովանդակությամբ և ներկայացվել ՀՀ ազգային ժողով:

Նախագծով առաջարկվող բոլոր ՀԿ-ների կողմից ֆինանսական հաշվետվությունների պարտադիր հրապարակումն ու ՊԵԿ-ի գործառույթների ընդլայնումն ավելորդ վարչարարություն և գործավարություն է, պետական միջոցների (ռեսուրսների) և ժամանակի անհարկի վատնում, չէ՞որ կրկնապատկվելու է պետական լիազոր մարմնի գործառույթները: Փաստորեն այս նախագիծը հակասում է նաև ՀՀ կառավարության օպտիմալացման քաղաքականությանն ու ծրագրին: ՀՀ կառավարությունը, մի կողմից, հայտարարում է, որ Կառավարությունում օպտիմալացումը ֆունկցիոնալ գործառույթների կրկնությունը բացառելու է, իսկ մյուս կողմից՝ կրկնապատկում է ՊԵԿ-ի լիազորությունների ու գործառույթների շրջանակն այս մեթոդով:

Հանրությանը հետաքրքիր է ՀԿ-ի թեմատիկ հաշվետվությունները, թե ինչով են նրանք զբաղվում, ինչ առաքելություն ունեն, ինչ ոլորտներում են իրականացնում իրենց գործունեությունը: Ակնհայտ է, որ նման մանրակրկիտ հաշվետվություն միայն ֆինանսական վերահսկողություն իրականացնող կառույցին է հետաքրքրում, այլ ոչ թե մեր սոցիալապես անապահով խմբի քաղաքացուն կամ շահառուին: Պետք չէ սեփական հետաքրքրասիրությունն ու ցանկությունը մշտապես վերագրել ընդհանուր հասարակությանը:

Ի դեպ, ՀԿ-ներն արդեն իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում էլեկտրոնային եղանակով ՊԵԿ ներկայացնում են իրենց աշխատողների եկամտահարկի, սոցիալական այլ վճարների, ամսվա և տարվա ամփոփ հաշվետվությունները՝ իրենց աշխատողների ընդունման-ազատման վերաբերյալ, տարեկան եկամտի և տարեկան ծախսի ընդհանուր գումարների մասին: Ավելին, գործող ՀԿ-ների ֆինանսական աղբյուրների մասին գերազանց տիրապետում են նաև Հայաստանի բանկերը: Գաղտնիք չէ, որ ՀԿ-ների կողմից ֆինանսական միջոցների մուտքերն ու ելքերն իրականացվում են բանկային ծառայությունների միջոցով, որոնց մասին տեղեկություններ ունեն նաև ՀՀ պետական այլ մարմինները և ՀՀ կենտրոնական բանկը: Այս հարցը կարգավորված է նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ Օրենքով: Իսկ եթե

¹ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804b537b>

ընդունենք, որ դրամաշնորհները կամ հանգանակությունները կատարվում են առձեռն, առանց բանկային փոխանցմամբ, ապա դա նույնպես վերահսկելի է և հնարավոր է բացահայտել՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Որպես կանոն, յուրաքանչյուր ՀԿ, իրականացնելով օտարերկրյա դրամաշնորհային ծրագիր, դրամաշնորհ տրամադրող կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագիր: Տարվա կտրվածքով այդ ՀԿ-ն իրականացնում է ֆինանսական աուդիտ, հիմնականում իր միջազգային կամ օտարերկրյա դոնորի կողմից ընտրված աուդիտորական ընկերության միջոցով:

Հայաստանում ակտիվ գործունեություն ծավալող ՀԿ-ները ունեն իրենց պաշտոնական կայքը և էջեր սոցիալական ցանցերում: Այնտեղ կարելի է գտնել նրանց մասին տեղեկություններ՝ կանոնադրություն, ղեկավար անձանց անուններ, գործունեության հասցե, քարտեզ, նպատակների ու առաքելությունների մասին տեղեկություններ, տարբեր տեսակի թեմատիկ, ֆինանսական հաշվետվություններ, հրապարակումներ և այլ տեղեկություններ:

Եթե ներկայացված փաթեթն ընդունվի այս տեսքով, դրան կից ներկայացված հիմնավորումներում բացակայում են տվյալ նորմը կիրառելու և չկիրառելու հնարավոր հետևանքների և պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների ու կարգի մասին տեղեկությունները: Նախագծով սահմանված չեն թե ինչպիսի պատժամիջոցներ են կիրառվելու այն ՀԿ-ների նկատմամբ, որոնք չեն հրապարակելու պահանջվող ֆինանսական հաշվետվությունը (տվյալներ) կամ հրապարակելու են ուշացումով կամ ոչ պատշաճ և ոչ ստույգ տեղեկատվություն (տվյալներ) են հրապարակելու: Այս դեպքում ստացվում է, որ լիազոր մարմինը հնարավորություն է ունենալու ընտրել և կիրառել պատժամիջոցներն իր հայեցողությամբ, ինչն էլ կարող է հանգեցնել հարկային ծառայողի անկառավարելի լիակատար ազատությանն ու չարաշահումներին, ինչու չէ նաև իր մեջ պարունակելու է կոռուպցիոն ռիսկ: Այս ամենը չենք նշում նրա համար, որպեսզի լիազոր մարմինը լրացում կատարի իր իսկ կողմից մշակված նախագծում՝ նշելով պատասխանատվության մասը, այլ արձանագրում ենք տվյալ փաթեթում առկա թերությունները: Իսկ եթե սույն օրենքով նախատեսվի պատասխանատվության մեխանիզմներ, ապա մեր մտահոգությունը տեղին է, որ այս փոփոխությունը մահակ է դառնալու «կարգազանց» ՀԿ-ների համար:

Չնայած, հարց է առաջանում նաև, թե լիազոր մարմինը ինչպե՞ս և ի՞նչ մեթոդներով է առաջնորդվելու, որպեսզի վերահսկի հազարավոր ՀԿ-ների գործունեությունը, նրանց հաշվետվությունների ներկայացման ժամկետները, դրանց բովանդակությունների համապատասխանությունը իրականությանը, միևնույն ժամանակ իրականացնի վարչարարություն:

Բացակայում են նաև սույն օրենքի նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում կատարվող լրացումներ ու փոփոխություններ կատարելու անհրաժեշտության կամ դրա բացակայության հիմնավորումները և օրենքի նախագծի մշակման համար հիմք հանդիսացող այդ իրավական ակտերի ցանկը: Օրինակ՝ առ այսօր բացակայում է կամավորության ինստիտուտին վերաբերող իրավակարգավորումները **(տես ՀՀ աշխատանքային օրենսգիրք 102 հոդ, 2-րդ մաս «Կամավոր աշխատանքը և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքը չեն կարող համարվել անօրինական: Այդպիսի աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով»:**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատում չի

կատարվել, թե այդ փոփոխությունները որքան կարժենան պետության և ոչ կառավարական կազմակերպությունների (ՀԿ-ների) համար, չէ՞որ լիազոր մարմնի գործառույթների ընդլայնում է տեղի ունենալու, պետք է առկա լինեն բոլոր իրավական և տնտեսական հիմնավորումներն ու գնահատումը:

Առաջարկություններ

Շարունակում ենք մնալ այն կարծիքին, որ ՀԿ-ների գործունեության և նրա նպատակների ու խնդիրների արդյունավետ իրականացման նկատմամբ վերահսկող մարմին կրկին պետք է ճանաչվի ՀՀ արդարադատության նախարարությունը, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, որպես ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմին, պետք է պահպանի իր այդ հիմնական գործառույթը:

Մեր կարծիքով, լիազոր մարմինը պետք է ստեղծի ընդամենը ՀԿ-ների մասին տեղեկատվական մեկ ընդհանուր բանկ՝ անվանական կարգով և տեղադրի կայքում, (որտեղ նշված կլինի ՀԿ-ի գործունեության ոլորտը, դեկավար անձանց տվյալները ինտերնետային կայքի հասցեն և այլն), որն էլ հնարավորություն կտա յուրաքանչյուր հետաքրքրասերի մուտք գործել այդ կայք և ծանոթանալ իր կողմից փնտրվող կազմակերպությանը վերաբերող տեղեկատվությունը: Կամ, եթե լիազոր մարմինը շատ է ցանկանում, ապա կարող է ՀԿ-ների կողմից արդեն իսկ իրեն էլեկտրոնային եղանակով ներկայացված հաշվետվություններից քաղել այն տվյալները, որոնք չեն խախտելու երրորդ անձանց իրավունքները, և հրապարակել իր կայքում:

Ինչ վերաբերում է ՀԿ-ների մասին մանրամասն տեղեկատվությանը, ապա շահագրգիռ անձը (տեղեկատվություն փնտրողը) կարող է իրեն հետաքրքրող ՀԿ-ի մասին տեղեկություն ստանալու խնդրանքով դիմել լիազոր մարմին, վճարել պետական տուրքի գումարը և ստանալ այն ինչ նա փնտրում է: Այս կարգը գործում է իրավաբանական անձի մասին տեղեկություն ստանալու դեպքում: Օրինակ՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրից ցանկացած իրավաբանական անձի կամ անհատ ձեռներեցի մասին տեղեկատվությունը հասանելի է, սակայն մանրամասն տեղեկատվության համար փնտրողը պետք է օրենքով սահմանված կարգով վճարի, այնուհետև ստանա այն: Սա ընդունելի ձևաչափ է, որը շահավետ է և՛ ՀԿ-ի, և՛ պետության համար:

Առաջարկում ենք օրենքով սահմանել այդ հնարավորությունը. այն անձը, որը կցանկանա մանրամասն տեղեկություն ստանալ որևէ ՀԿ-ի մասին, այդ թվում նաև ֆինանսական, ապա թող վճարի և վճարման անդորրագրի հիման վրա ձեռք բերի իր կողմից փնտրվող տեղեկատվությունը, իսկ այդ գումարի որոշ տոկոս կփոխանցվի տվյալ ՀԿ-ի հաշվին, դա կլինի պետության կողմից աջակցության ձև ՀԿ-ներին:

Գործող օրենքի 24-րդ հոդվածի համաձայն ստեղծել ՀԿ-ներին տրամադրվող պետական և տեղական դրամաշնորհների առցանց տվյալների բանկ /կայք/, որը կպարունակի տեղեկություններ այն ՀԿ-ների մասին, որոնք դրամաշնորհներ են ստացել պետական կամ հանրային միջոցներից, ինչպես նաև կպարունակեն հանրային դրամաշնորհների մրցույթների անցկացման մասին տեղեկություններ: Շահագրգիռ կազմակերպությունները ստիպված չեն լինի յուրաքանչյուր նախարարության կայքում փնտրել այդ տեղեկությունները, այլ հնարավորություն կունենան այն գտնել մեկ կայքում: Սա նաև հնարավորություն կտա բոլորիս տեղեկանալ նաև, թե որ ՀԿ-ներն են պետական դրամաշնորհներ ստանում, ինչպիսի հանրային ծրագրեր են իրականացնում²: Սա լիովին կհամապատասխանի գործող օրենքի 24-րդ հոդվածի պահանջի լիարժեք կատարմանը, կապահովվի հանրային դրամաշնորհների տրամադրման գործընթացի թափանցիկությունն ու լիազոր մարմնի կողմից մեջ

² Ի դեպ, այս մասին բազմիցս առաջարկել ենք ՀՀ արդարադատության նախարարությանը, որը ցավոք կյանքի չի կոչել:

բերված հանրության իրազեկումն ու ՅԿ-ների կողմից հանրային միջոցների օգտագործման հաշվետվողականությունը: ՅԿ-ների կողմից ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելու մասով նոր հեծանիվ պետք չէ հորինել:

Մյուս կարևոր հիմնախնդիրը վերաբերում է նաև ՅԿ-ների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն, ինչի վերաբերյալ պետական հարկային քաղաքականությունը վերանայելու և փոփոխելու փոխարեն լիազոր մարմինը ձեռնամուխ է եղել ամբողջությամբ վերահսկել բոլոր ՅԿ-ներին, անկախ նրանից նրանք հանրային միջոցներից օգտվել են թե ոչ: Այսօր առկա են բազմաթիվ խնդիրներ կապված ՅԿ-ների ձեռնարկատիրական գործունեության հարկային քաղաքականության հետ, որը պարզեցնելու և նոր մեխանիզմներ մշակելու կարիք ունի: Գործող օրենսդրությամբ ՅԿ-ների ձեռնարկատիրական գործունեությունը հարկվում է նույն կերպ, ինչ տնտեսական ընկերությունների (շահույթ հետապնդող) ձեռնարկատիրական գործունեությունը, սահմանված չեն նույնիսկ հարկային արտոնություններ: Եթե պետության կողմից ՅԿ-ների համար հարկային արտոնություններ չեն սահմանվում, ապա նրանց վրա լրացուցիչ պահանջ և բեռ դնելն ուղղակի արդարացի չէ:

Եթե լիազոր մարմինը ոչինչ չունի անելու և կենտրոնացած է միայն ՅԿ-ների նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը խստացնելու ուղղությամբ, ապա առաջարկում ենք, որպես գործող օրենքով ճանաչված լիազոր մարմին, ձեռնամուխ լինել օրենքով «հանրային շահ» և «հանրային միջոցներ» բառակապակցությունները հստակեցնելու և սահմանումներ տալու գործում՝ հանրային քննարկումների միջոցով: Օրինակ՝ եթե հարկային մարմինը չի կարողանում հստակ պատկերացում կազմել կամ տարաբնույթ ընկալման տեղիք է տվել «հանրային միջոց» բառակապակցությունը, ապա այդ նպատակով կարող է լուրջ ուսումնասիրություն կատարել:

Մեզ համար այդպես էլ անհայտ է մնում, թե հարկային քաղաքականություն իրականացնող պետական լիազոր մարմինն իրականում ինչպիսի տեղեկատվություն է փնտրել որ չի կարողացել գտնել և/կամ ստանալ ՅԿ-ներից և որ նման առաջարկությամբ է հանդես գալիս: Կարծես, հարկային մարմինը ազնիվ չէ իր այս նկրտումներում: Եվ ի վերջո, ինչ նպատակ է հետապնդում ՊԵԿ-ի այս բացարձակ վերահսկողությունը կամավոր միավորումների նկատմամբ:

Այսպիսով, մենք շարունակում ենք մնալ նաև այն կարծիքին, որ ՅԿ-ների գործունեության և նրա նպատակների ու խնդիրների արդյունավետ իրականացման նկատմամբ վերահսկող մարմին կրկին պետք է ճանաչվի ՅԿ արդարադատության նախարարությունը, իսկ ՅԿ պետական եկամուտների կոմիտեն, որպես ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմին, պետք է պահպանի իր այդ հիմնական գործառույթը և բավարարվի գործող օրենքով ներկայացվող հաշվետվությունների բովանդակությամբ:

Պահանջ

Հիմք ընդունելով վերոգրյալը, խնդրում ենք հանձնաժողովից՝

- վերադարձնել ՅԿ կառավարությանը «Հասարակական կազմակերպությունների մասին» ՅԿ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը՝ լրամշակման նպատակով,
- սկսել համատեղ քննարկումների շարք ՅԿ օրենքով լիազոր մարմին կրկին ՅԿ արդարադատության նախարարությանը ճանաչելու հարցի շուրջ և բոլոր այս քննարկումներում մասնակից դարձնել շահարգիռ կողմերին:

Մենք գտնում ենք, որ այսօր լիազոր մարմին ճանաչված ՊԵԿ-ը ընդհանուր ոչինչ չունի ՀԿ-ների հետ, բացի ֆինանսական տոտալ վերահսկողության մեթոդից,

- սկսել հանրային նոր քննարկումներ ՀԿ-ներին հետ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և հարկային արտոնություններ տրամադրելու կարգի հետ կապված հարցերի շուրջ:

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ